

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Հայտնի է, որ ՀՀ-ում հանցագործության սուբյեկտ է համարվում միայն բանական էակը, ով ի գորու է գիտակցելու իր գործողությունները և ղեկավարելու դրանք: ՀՀ քրեական օրենսգրքի 23 հոդվածը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի»: Միայն ֆիզիկական անձին որպես հանցագործության սուբյեկտ դիտելը բխում է անձնական և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքներից: Այս սկզբունքների առկայությամբ է պայմանավորված իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ժխտումն այնպիսի երկրներում ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան, Լեհաստանը: Այնուամենայնիվ, ինչպես նշում է Սմիրնովը, ներկայումս իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտն այս կամ այն տեսքով հայտնի է աշխարհի՝ շուկայական տնտեսություն ունեցող երկրների մեծ մասի ազգային իրավակարգերին<sup>2</sup>:

Հարկ է նկատել սակայն, որ աշխարհում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մեկ միասնական ընդունելի մոդել գոյություն չունի: Պատմությունը ձևավորել է այս ինստիտուտի կիրառման մի շարք մոդելներ, որոնց բազմազանությունը պայմանավորված է երկրների իրավական համակարգերի տարբերությամբ, սոցիալ-քաղաքական առանձնահատկություններով, տնտեսական զարգացման աստիճանով և մի շարք այլ հանգամանքներով:

<sup>1</sup> ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ա. Մարգարյան:

<sup>2</sup> См. у Смирнов Г., Перспективы и условия введения в России института уголовной ответственности юридических лиц // Уголовное право, 2011, № 2. էջ 77:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ գալիս ենք այն եզրակացության, որ գոյություն ունեն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության երեք հիմնական մոդելներ<sup>1</sup>:

Առաջին մոդելում իրավաբանական անձը ֆիզիկական անձի հետ միաժամանակ հանդես է գալիս որպես հանցագործության ինքնուրույն սուբյեկտ: (Այս մոդելը բնորոշ է ընդհանուր իրավունքի երկրներին՝ Անգլիա, ԱՄՆ, Շոտլանդիա, ինչպես նաև մայրցամաքային իրավունքի որոշ երկրներին՝ Ֆրանսիա, Բելգիա):

Երկրորդ մոդելի համաձայն՝ հանցագործության սուբյեկտ է միայն ֆիզիկական անձը, սակայն իրավաբանական անձի՝ հանցագործությանը մասնակցելու դեպքում վերջինիս նկատմամբ կիրառվում են քրեաիրավական ներգործության միջոցներ: Այսինքն՝ իրավաբանական անձը դիտարկվում է ոչ թե որպես հանցագործության, այլ քրեական պատասխանատվության սուբյեկտ: Այս մոդելը գործում է օրինակ Ալբանիայում, Իսպանիայում, Լատվիայում, Թուրքիայում:

Երրորդ մոդելի համաձայն՝ հանցագործությանը մասնակցելու համար իրավաբանական անձը ենթարկվում է ոչ թե քրեական, այլ վարչական պատասխանատվության, այդ իսկ պատճառով այս մոդելն այլ կերպ կոչվում է «իրավաբանական անձանց քվազիքրեական պատասխանատվություն»: Գերմանիան և Իտալիան՝ պետություններ, որոնք ավանդաբար դիմադրել են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ազգային իրավական համակարգ ներմուծելուն, քրեական գործերով դատարաններին շնորհել են իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթ իրականացնելու իրավասություն<sup>2</sup>: Ներկայումս այս մոդելը գործում է Գերմանիայում և Իտալիայում, ինչպես նաև այնպիսի երկրներում ինչպիսիք են՝ Ադրբեջանը, Լատվիան և Ուկրաինան:

---

<sup>1</sup> St 'u **Смирнов Г.**, Уголовная ответственность юридических лиц на подступах к России, СПС «Гарант», էջ 150-158:

<sup>2</sup> Մ. Փիեթ, Լ. Ա. Լոու և Փ. Ջ. Քալեն (խմբ.) (2007 թվական), Կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիա. ծանոթագրություն, Քեմբրիջ, ՄԹ. Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, էջ 223:

Հատկանշական է, որ առաջին մոդելի շրջանակներում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ ձևավորված տեսությունները, որոնք ստորև կքննարկվեն, գործնականում կիրառելի են նաև մյուս մոդելների համար: Գրականության մեջ այդ տեսությունները ևս հաճախ անվանվում են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մոդելներ:

Այսպես, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը առաջ է եկել ընդհանուր իրավունքի երկրներում, մասնավորապես՝ Անգլիայում և ԱՄՆ-ում գրեթե միաժամանակ, ընդ որում, այն ծագել է նախադեպային իրավունքից:

Պատմականորեն Անգլիայի քրեական իրավունքը բացառում էր իրավաբանական անձանց կողմից հանցագործություն կատարելու և դրա համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Դեռ 1250 թ. Պապ Ինոկենտի 4-րդը հայտարարել է, որ կորպորացիան հոգի չունի<sup>1</sup>, ինչը արտացոլումն էր այն ժամանակվա պատկերացումների:

Բացի այդ, անգլիական իրավունքում քննարկվող ժանանակաշրջանում պահանջ կար, համաձայն որի՝ դատապարտյալը պարտավոր էր անձամբ ներկա լինել դատարանում:

Այնուամենայնիվ 19-րդ դարի կեսերին Անգլիայի տնտեսական զարգացումը և ինդուստրիալիզացիան չէին կարող ազդեցություն չունենալ երկրի քրեական քաղաքականության վրա: Որպես հետևանք անգլիական դատարանները, որոնք նախկինում հանդես էին գալիս իրավաբանական անձանց պատասխանատվության դեմ, փոխեցին իրենց հայացքները, ինչը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով՝

1. իրավաբանական անձինք սկսեցին համարվել առանձին իրավական կառուցվածքներ՝ անկախ դրանք ստեղծող անհատներից,

---

<sup>1</sup> St´u Laurel J. Harbour and Natalya Y. Johnson, Can a Corporation Commit Manslaughter? Recent Developments in the United Kingdom and the United States. «Defense Counsel Journal» Jul 2006. P. 226-234. P. 226:

2. դատարանները սկսեցին նրանց պատասխանատվությունը սահմանել քրեորեն պատժելի անգործության և հասարակական կարգի խախտման համար (public nuisance)<sup>1</sup>:

Առաջին անգամ 1842 թ. Անգլիայի Թագի դատարանը իրավաբանական անձին մեղավոր ճանաչեց օրենքով վերջինիս վրա դրված պարտականությունը չկատարելու համար: 1944 թ. սկսած սակայն Անգլիայում իրավաբանական անձինք սկսեցին քրեական պատասխանատվության ենթարկվել ցանկացած հանցագործության և՛ կատարման, և՛ հանցակցության համար՝ անկախ հանցագործության սուբյեկտիվ կողմի (մեղավոր կամքի (mens rea)) առկայությունից<sup>2</sup>:

Այսպիսով՝ հնարավոր եղավ իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկել ցանկացած հանցագործության համար, բացառությամբ այն հանցագործությունների, որոնց համար նախատեսվում էին մարմնական պատիժներ<sup>3</sup>:

19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը դատարանները սկսեցին որոշումներ կայացնելիս ղեկավարվել սուբսիդիար պատասխանատվության տեսությամբ (այլ կերպ ասած՝ պատասխանատվության փոխարինման կամ այլ անձի փոխարեն պատասխանատվության տեսություն), որը ծագել է դելիկտային իրավունքից<sup>4</sup>: Տեսության հիմքում ընկած էր հետևյալ սկզբունքը՝ «թող պատասխան տա ամենավերևում կանգնածը»: Այս տեսության համաձայն՝ իրավաբանական անձը կարող էր քրեական պատասխանատվության ենթարկվել իր ցանացած աշխատակցի գործողության համար: Ներկայումս այս տեսությունը կիրառվում է միայն ներքոթվարկյալ երեք դեպքերում՝

---

<sup>1</sup> St 'u **Есаков Г. А.**, Уголовная ответственность юридических лиц за убийство по английскому и шотландскому уголовному праву // Lex Russica, Научные труды МГЮА, - М., Изд-во МГЮА, 2005, № 1, էջ 146:

<sup>2</sup> St 'u **Guy Stessens**, Corporate criminal liability: a comparative perspective. «International and Comparative Law Quarterly» 17 Jan 2008, P. 493-520, էջ 508:

<sup>3</sup> **Есаков Г. А.**, Уголовная ответственность юридических лиц за убийство по английскому и шотландскому уголовному праву // Lex Russica. Научные труды МГЮА, - М., Изд-во МГЮА, 2005, № 1, - с. 142-163, с. 147:

<sup>4</sup> St 'u **Laurel J. Harbour and Natalya Y. Johnson**, Can a Corporation Commit Manslaughter? Recent Developments in the United Kingdom and the United States. «Defense Counsel Journal» Jul 2006, P. 226-234:

1. եթե աշխատակիցը կատարել է «public nuisance» (հասարակական կարգի խախտում),

2. եթե աշխատակիցը կատարել է քրեորեն պատժելի գրպարտություն,

3. պատվիրական սկզբունքի գործողության դեպքում, եթե օրենքը պատասխանատվություն է սահմանում կազմակերպության համար, ապա նա պատասխանատու է այն անձանց գործողության կամ անգործության համար, ում հանձնարարված է կազմակերպության գործերի վարումը:

Քննարկվող տեսությունը արմատավորվեց և զարգացավ ԱՄՆ-ում, ի տարբերություն Անգլիայի, որը որդեգրեց մեկ այլ՝ նույնականացման տեսությունը:

Մինչ վերջինին անդրադառնալը, հարկ է նկատել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի զարգացումը Ամերիկայում սկսվել է գրեթե նույն ժամանակ և ընթացել է նույն ձևով, ինչպես Անգլիայում: Սկզբնական շրջանում պատասխանատվությունը առաջանում էր այն հանցանքների համար, որոնց կատարումը չէր պահանջում մեղքի առկայության վերաբերյալ ապացույց: Իրավիճակը փոխվեց 20-րդ դարի հենց սկզբին: Էլկինսի ակտում (Elkins act) սահմանվեց, որ իր լիազորությունների շրջանակներում գործող աշխատակցի գործողությունները և անգործությունը պետք է համարվեն գործատու կորպորացիայի գործողություն և անգործություն: Այսինքն՝ քննարկվող տեսության համաձայն՝ կորպորացիան կարող է պատասխանատվություն կրել իր ցանկացած աշխատակցի ցանկացած գործողության համար, որը վերջինս կատարում է իր աշխատանքային լիազորությունների շրջանակներում՝ ելնելով ընկերության շահերից, ընդ որում, աշխատակցի զբաղեցրած դիրքը որևէ նշանակություն չունի:

Նույն ժամանակահատվածում Անգլիայում ձևավորվեց և լայն կիրառում ստացավ նույնականացման տեսությունը, որի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ իրավաբանական անձի միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը և հոգեվիճակն է ընկալվում որպես իրավաբանական անձի գործողություն կամ հոգեվիճակ, այլ կերպ ասած՝ դեկլարար անձի կամքը իրավաբանական անձի կամքն է: Այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվում է պաշտոնատար անձի կողմից, իրա-

վարանական անձը պատասխանատվության է ենթարկվում որպես կատարող, իսկ այն դեպքում, երբ ղեկավար անձը հանդես է եկել որպես օժանդակող, ապա իրավաբանական անձը պատասխանատվության պետք է ենթարկվի հանցագործության օժանդակության համար: Այսինքն՝ իրավաբանական անձի ղեկավար անձնակազմի գործողությունները նույնականացվում են հենց իրավաբանական անձի գործողությունների հետ:

Այս տեսության հիմքը 1957 թ. ընդունված դատական որոշումն էր, որում դատավոր Լորդ Դեննինգը կորպորացիան համեմատում էր կենդանի էակի հետ, նշելով, որ այն նույնպես ունի ուղեղ, նյարդային կենտրոններ, որոնք կառավարում են իր գործողությունները, ինչպես նաև ձեռքեր, որոնք գործում են կենտրոնական նյարդային համակարգի հրամաններով: Կորպորացիայի որոշ աշխատակիցներ՝ հասարակ ծառայողները, նրա ձեռքերն են, որոնք կատարում են «սև» աշխատանքը, բայց միևնույն ժամանակ պատասխանատու չեն նրա գիտակցության և կամքի համար: Այլ է իրավիճակը, երբ խոսքը տնօրինության կորպորացիայի ղեկավար անձնակազմի մասին է, որը հանդիսանում է կորպորացիայի ուղեղը և կառավարում է այն: Միայն ղեկավար անձնակազմը կարող են իդենտիֆիկացվել կազմակերպության հետ<sup>1</sup>: Նույնականացման տեսությունը մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհում իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի զարգացման վրա և ներկայումս ունի լայն կիրառություն:

Վերը քննարկված տեսություններն ունեն իրենց առավելություններն ու թերությունները:

Նույնականացման տեսությունը, սահմանելով նույնականացման ենթակա անձանց կոնկրետ շրջանակը, մի կողմից հեշտացնում է իրավակիրառ գործունեությունը, քանի որ այս տեսության շրջանակներում հստակ կերպով կանխորոշված են այն սուբյեկտները ում կատարած հանցագործությունը կարող է մեղսագրվել իրավաբանական անձին: Մյուս կողմից, սակայն, այս մոդելն անչափ նեղացնում է նույնականացման ենթակա անձանց շրջանակը, քանի որ կորպորա-

---

<sup>1</sup> St 'u Уголовное право зарубежных государств, Общая часть/ Под ред. И. Д. Козочкина, М, 2003, էջ 46 հղումով Bolton (Engineering) Co Ltd v P J Graham & Sons Ltd [1957] 1 QB 159:

ցիաները շատ բարդ կառույցներ են՝ ծանրաբեռնված կոլեկտիվ որոշումների կայացման գործընթացներով, որոնցում բարձրաստիճան ղեկավարներից բացի ներգրավված են նաև բազմաթիվ այլ անձինք: Այդ իսկ պատճառով, երբ կատարվում է կորպորատիվ հանցանք, հաճախ շատ դժվար է նույնականացնել հանցանք կատարած անձին, և որքան մեծ է ընկերությունը, այնքան հավանական է, որ նույնականացման տեսության շրջանակներում այն կարող է խուսափել պատասխանատվությունից:

Իրավաբանական անձանց պատասխանատվության քննարկված մյուս մոդելը, ընդհակառակը, անչափ լայն է, քանի որ այդ դեպքում գործնականում անհնար է վերահեսկել յուրաքանչյուր աշխատակցի վարքագիծը: Այսպիսով՝ արդյունավետության տեսանկյունից տեսություններից առաջինը չափազանց սահմանափակ է, իսկ երկրորդը անչափ լայն: Այդ է պատճառը, որ փորձ արվեց գտնելու նոր՝ առավել արդյունավետ տարբերակներ<sup>1</sup>:

Արդյունքում ի հայտ եկան այլընտրանքային մոտեցումներ: Նույնականացման տեսությունն ընդլայնվեց. որպես իրավաբանական անձի պատասխանատվության հիմք դիտվեց նաև ղեկավարության կողմից աշխատակիցների նկատմամբ վերահսկողության բացակայությունը:

Մեկ այլ այլընտրանքային տեսության հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ընկերության գործողությունները չպետք է նույնանան ֆիզիկական անձի գործողությունների հետ: Այս տեսությամբ փորձ է արվում տարանջատելու կորպորատիվ պատասխանատվությունը ֆիզիկական անձանց պատասխանատվությունից և փոխարենը այն սահմանելու կազմակերպական մեղքի տեսանկյունից: Այսպես՝ կազմակերպական մեղքի տեսության համաձայն՝ իրավաբանական անձը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև այն բանի համար, որ դրանում թույլատրվում է օրենքի չպահպանումը կամ շրջանցումը, որոշ դեպքերում պատասխանատվություն կարող է վրա հասնել այն բանի համար, որ իր աշխատակցի կատարած հանցավոր արարքի մասին իրավաբանական անձը իմացել է, բայց լռել է:

---

<sup>1</sup> St' u **Есаков Г. А.**, *Англо-американское уголовное право: эволюция и современное состояние общей части*, М., ТК Велби, Изд-во Проспект, 2007, էջ 412:

Այսպիսով՝ ներկայումս գոյություն ունեն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ չորս հիմնական տեսություններ, մոդելներ, որոնք են՝

1. Այլ անձի փոխարեն պատասխանատվության փոխարինման մոդելը, որի էությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ «Թող պատասխան տա ամենավերևում կանգնածը»: Այս դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար հիմք կարող է ծառայել այն հանցանքը, որը կատարվել է աշխատակցի կողմից իր աշխատանքային լիազորությունների շրջանակում և ընկերության շահերից ելնելով,

2. Նույնականացման մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել միայն այն հանցանքը, որը կատարվել է վերահսկողություն իրականացնող աշխատակցի կողմից, այն է՝ ընկերության բարձրաստիճան ղեկավար օղակին պատկանող կամ ներկայացուցչական լիազորություններ ունեցող անձի կողմից,

3. Ընդլայնված նույնականացման մոդելը, որի դեպքում բացի նույնականացման տեսությամբ պատասխանատվության առաջացման հիմնական հատկանիշներից իրավաբանական անձի պատասխանատվության հիմք կարող է ծառայել նաև ղեկավար օղակի կողմից իր աշխատակիցներին վերահսկելու անկարողությունը («վերահսկողության բացակայության կանոն»),

4. Կազմակերպական մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվությունը սահմանվում է՝ ելնելով իրավաբանական անձի կորպորատիվ մշակույթի թերություններից:

Հարկ է նշել նաև, որ քննարկված բոլոր մոդելների համաձայն՝ իրավաբանական անձինք պատասխանատվության չեն ենթարկվում պատասխանատու անձանց կողմից կատարված հանցանքի համար, եթե դրանք կատարվել են տվյալ անձի մասնավոր շահերից ելնելով:

Անդրադառնալով ՀՀ-ում այս ինստիտուտի հնարավոր ներդրմանը՝ անհրաժեշտ է նկատել, որ Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ՀՀ-ում ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է մեր պետության ստանձնած միջազգային պարտավորություններով: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային կոնցվենցիաներ, որոնք ուղղակի պահանջ են նախատեսում՝ մշակելու իրավաբանա-

կան անձանց պատասխանատվության մոդելներ, հատկապես կոռուպցիոն և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի շրջանակներում: Մասնավորապես՝ նման դրույթներ են ամրագրված Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիաներում, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում, որոնց համաձայն՝ Յուրաքանչյուր Մասնակից պետություն, պարտավորվում է իրավաբանական անձանց պատասխանատվության համար ապահովել արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ ազդեցություն ունեցող պատասխանատվության միջոցներ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի անդամ երկրների մոնիթորինգի արդյունքների ամփոփման զեկույցում նշվում է, որ հանձնարարականների մեծ մասը ՀՀ-ն կատարել է, բացառությամբ մի կարևոր հանձնարարականի, որը վերաբերում է իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելուն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը ՀՀ-ում ուղղակի անհրաժեշտություն է: Ինչ վերաբերում է այն հարցին, թե պատասխանատվության քննարկված մոդելներից որը կարող է կիրառական լինել ՀՀ-ի համար, ապա կարծում ենք, որ առավել նպատակահարմար է ընդլայնված նույնականացման մոդելը, որը քննարկվել է վերևում:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով նախատեսվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, սակայն իրավաբանական անձը, ինքնին, չի հանդիսանում հանցագործության սուբյեկտ, այլ որդեգրված մոտեցման համաձայն՝ միայն քրեական պատասխանատվության սուբյեկտ է:

Կարծում ենք, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ճիշտ և մեր երկրի համար կիրառելի մոդելի ներդրումը կարող է եսպես նպաստել հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը:

*Տրբուի Գալյան*  
*Ասպիրանտ Կաֆեդրայի քրեական իրավունքի ԵԳՄ*

## ОСНОВНЫЕ МОДЕЛИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

В статье рассмотрены основные модели уголовной ответственности юридических лиц в зарубежных странах. В этой связи проанализированы особенности и типичные черты применения моделей данного института в странах общего права (в частности, в Англии и США), а так же некоторых странах континентального права. На основе сравнительного анализа автором предлагается наиболее эффективная для Республики Армения модель.

*Srbuhi Galyan*  
*PHD Student of the YSU Chair of Criminal Law*

## THE MAIN MODELS OF CRIMINAL RESPONSIBILITY OF LEGAL ENTITIES IN FOREIGN COUNTRIES

The main models of criminal responsibility of legal entities in foreign countries are discussed in the article presented. The article contains thorough analysis of the defining features and peculiarities of the application of the institute in common law countries, e.g. in England and USA, as well as in certain states belonging to the continental legal system. In addition, the typical features of implementation models of the institute at hand were investigated. The Article is unique in the sense, that via comparative analysis it suggests the most efficient model of the criminal responsibility of legal entities for Republic of Armenia.

*Բանալի բառեր՝ իրավաբանական անձ, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, նույնականացման տեսություն, քվազիքրեական պատասխանատվություն*

**Ключевые слова:** *юридическое лицо, уголовная ответственность юридических лиц, теория отождествления, квази уголовная ответственность.*

**Key words:** *legal entity, criminal responsibility of legal entities, theory of identification, quasi criminal responsibility.*